ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՓԱԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն ՓՊՄԱՊՁԲ-19/43-48

ք. Երևան 14.04.2025թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, «Գործընկեր-1»՝ (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի՝ «Գործընկեր-2» հետ), ի դեմս «Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Լ. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Կողմերը սահմանում են, որ՝

1.1 Վաճառողը մասնակցել է Գնորդի կողմից «Հանդերձանքի» ձեռքբերման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՓՊՄԱՊՁԲ-19/43 ծածկագրով կազմակերպված պետական գաղտնիք պարունակող փակ պարբերական մրցույթի նախաորակավորման ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ) և գրանցվել է որպես հնարավոր մասնակից:

1.2 Վաճառողի կողմից հայտ ներկայացնելը պարտադիր չէ:

1.3 Հայտը Վաճառողի կողմից ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող յոթ օրացուցային օրվա ընթացքում՝ ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

1.4 Վաճառողը կարող է դադարեցնել փակ պարբերական մրցույթի սկզբնական պայմանագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով Գնորդին: Սկզբնական պայմանագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում դրա հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Սկզբնական պայմանագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը Գնորդի մոտ մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում Վաճառողի մասին տվյալները հեռացվում են սկզբնական պայմանագիր կնքած անձանց ցուցակից:

2. Կողմերի պատասխանատվությունը

2.1 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Վաճառողը պարտավորվում է չհրապարակել (ցանկացած ձևով) որևէ մեկին (այդ թվում նաև հարազատներին) պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները, որոնք կվստահվեն կամ հայտնի կդառնան սույն ընթացակարգի շրջանակներում:

3.Այլ պայմաններ

3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

3.2 Քանի որ Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ի հետ, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է:

3.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Վաճառողի վավերապայմանների փոփոխության դեպքում սույն պայմանագրի փոփոխություն չի կնքվում: Վաճառողը նոր վավերապայմանների մասին գրավոր ծանուցում է Գնորդին:

3.4 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում:

3.6 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 02522157 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	«Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ ՀՀ, Արմավիրի մ., ք. Էջմիածին, Վազգեն Առաջին փող. 1շ., 36 բն. «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2472904229030010 ՀՎՀՀ 04727235 էլ. փոստ՝eghiazaryan77@bk.ru; arminehovsepyan242@gmail.com Հեռ. 091 19 62 49; 091 59 45 45 տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆ